

ընթացումներուն մէջ, վերականգնանայնա-
լով պատմական անցեալի դրոշմներն ու
անցքերը, զանոնք հանգամանօրէն ծանո-
թացնելու համար հայ մանկուտուն, եւ ի-
րեւելայէ՝ դործածելով լեզու մը՝ որ ժո-
ղովրդական լեզուն է:

Լեզուն ըսինք: Ինչպէս «Պատմութիւն
արդի հայ գրականութեան» իր առաջին
հատորին մէջ ճշգրտօրէն կը նկատէ Ս.
Ղազարու Միաբաններէն բաղմաշխատ Հ.
Մեսրոպ Վրդ. Ճանաչեանը՝ Ալիշանի իս-
կապէս մեծ բանաստեղծութիւնը գրեթէ
անմեծանալի մնացած է ոչ միայն հայ
հոծ հաւաքականութեան՝ այլեւ այժմու
մեր գրողներէն շատերուն, որովհետեւ
այդ մեծ քերթողութեան զգեստաւորումը
գրաբարն է, գրաբար մը՝ որ իր դժուա-
րութեամբ ի մի գուզուելով արծարծուած
նիւթին բարդութեան՝ դժուար է ճաշա-
կել, եթէ ընթերցողը գէթ մասամբ տի-
րացած չէ մեր դասական լեզուին:

Հայութեան եւ հայ մտաւորականու-
թեան մէկ մեծ մասը Ալիշան բանաստեղ-
ծը առաւելագոյն ճանչցած է այն մի քանի
Նախապետի երգեր խորագիրը կրող ա-
շուղագիր եւ աշուղաշունչ բանաստեղ-
ծութիւններէն՝ որոնք հատուկօրէն հաւա-
քածոներու մէջ կը շրջին երկիր, երկիր,
միշտ նոյններն ու միշտ միեւնոյնները, եւ
որոնք, հակառակ իրենց սիրոյն, աւիւ-
նին, հոծութեան եւ շունչին՝ բանաստեղ-
ծին յաջողագոյն էջերը չեն կազմեր:

Անշուշտ, այսքան յորդհոսան արտա-
գրութեան մէջ, մարդարտափայլ արտա-
գրութիւններու շարքին՝ կը հանդիպինք
նաեւ քերթուածներու, որոնք նուազ վա-
րակիչ են եւ նուազ ստեղծագործական:
Վանկարանութիւնն ու յանգարանութիւ-
նը, իրենց կարգին, ինչպէս նաեւ երկա-
րաբանութիւնն ու հոգեւորական գեղում-
ները տուեալ կու տան երբեմն գեղեցկա-
գիտական տարրերուն:

Բառերու կուտակումներ, մանաւանդ

սաղաւարտակիր ածականներ, կը խաթա-
րեն՝ կարծէք՝ զգացման գոհարը, բա-
նաստեղծութեան հայելիին մէջ. սակայն,
ստէպ ալ բառերու այդ ամէհի թափն է
որ կը կենդանացնէ էջը, զգացման եւ մը-
տածման ալետատան յառաջացման պար-
գեւելով՝ չես գիտեր ի՞նչ՝ նոյնքան ա-
հարկու պրկում մը, կեցուածք մը, որ
բանաստեղծին մէջ ենթադրել կու տայ
խրոխտ սիրտ մը, եւ աւելի քան խրոխտ
միտք մը, մէկ խօսքով ազամանդեայ բա-
րոյական նկարագրի մը գոյութիւնը:

Մեղք որ Ալիշան, յետ պաշտօնապէս
32 տարեկանին հեռանալէ բանաստեղծու-
թենէն, նոյնքան պաշտօնապէս անդամ մը
եւս չէ վերադարձած այդ արդաւանդ
մարդագետին վրայ, բարեփոխման եւ
վերամշակման բովէն անցընելու համար
ինչ որ արտադրած էր:

Անշուշտ, այս բիծերը ոչինչ կը կշռեն
ոճի, լեզուի եւ արուեստի այն բարեմա-
նութեանց գիմաց՝ որոնք Ալիշանի դոր-
ծը կը զնեն հայ բանաստեղծութեան ա-
ռաջնագոյն գիծը գրաւող քերթողներուն
գործին կողք կողքի: Իր գործին գեղար-
ուեստական մասը, իր ընդհանուր առ-
մամբ իսկապէս զօրաւոր է, զօրաւոր է
միտքը, սիրտը, եւ նոյնքան զօրաւոր՝
ներշնչումն ու ահարկու երեւակայութիւ-
նը, որոնք յաճախ իրարու ձեռք տալով՝
կը կառուցանեն իսկապէս լայնաշունչ եւ
լայնալիք քերթուածներ, որոնք կը հոսին
առատարութիւն, արձագանգելով եւ ծաւա-
լելով եւ բաղմապատկուելով, մեր յու-
գեալ երեւակայութեան առջեւ կերպաւո-
րելով այն չքնաղ մտապատկերներն ու
տեսիլները՝ զորս Ս. Ղազարու պատկառ-
ազդու քնարահարը կը յօրինէ իր սրտին
լուծութեանը մէջ, զանոնք պարգեւելու
համար կեանքի քարերուն վրայ իրենց
սիրտն ու ոտքերը ամէն օր արիւննոտող
խեղճ մարդկութեան:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ԱԼԻՇԱՆ՝ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԸ*

Վաթսուն տարիներ անցան այն օրէն՝
երբ Նահապետը փակեց իր աչքերը, երբ
լուց Հայաստանի Պապուլը, երբ սուգի
մառախուղը իջաւ Արարատեան դաշտին
վրայ:

Հայ ժողովուրդին հաւատքի եւ սիրոյ
փարոսն էր որ կը մարէր, իր ալեկոծեալ
յոյսերուն հորիզոնին վրայ:

Այն օրը Ալիշան կը բաժնուէր իր սի-
րած Ազգէն, իր սիրած կղզեակէն, միա-
նալու համար հին աշուղներու եւ դրու-
պատուրներու փաղանգին. մտնելու հա-
մար մեր հինաւուրց հանճարներուն պան-
դէտին մէջ, որուն անմահութեան երկ-
նակամարին վրայ Եղիշէներ, Նարեկացի-
ներ, Ներսէս Շնորհալիներ, Սահակ-Մե-
սրոպներ կը կազմեն հայ մտքի ու փառքի
լուսաւոր աստղերու ծիր-կաթին:

Տարեդարձները եւ ոգեկոչումները շատ
անգամ կը ծառայեն պահ մը կեանքի բե-
րելու անուններ ու գործեր՝ ճակատա-
գրական կերպով յիշողութենէ ինկած,
զրական անոնք զրադէտներ, գիտնական-
ներ, զօրավարներ, հերոսական գէմքեր
ու դէպքեր. մինչ Ալիշան մեր գրականու-
թեան մէջ բացառիկ տեղ մը կը գրաւէ,
ինչպէս բեւեռային աստղը երկնակամա-
րին վրայ իր անշէջ լոյսով:

Ալիշանի բաղմահատոր գործերուն հըս-
կայ զանգուածը որ կը գիւղուի մեր գրա-
կանութեան հորիզոնին վրայ, լուսադոյն
վկայութիւնն է իր տիեզերական հանճա-
րին, իր տիրապետող կենսունակութեան,
զիւցազնեղակ քերթողի նկարագրին,
որոնց մէջ հայրենի պատմութիւնն է որ
կը փայլի՝ հին ոսկիի նման, ուր նախա-
հայրերու ծայրն է որ կը հնչէ միշտ ա-
ւելի ուժգին ու միշտ աւելի բարձր, ուր
կ'ապրին հին աւանդութիւնները, գիւ-
ղական բարքերը, նաւասարդեան տօները:

Ոչ ոք իրմէ աւելի մօտէն լսած է Մայր
Հայրենիքի ձայնը, անոր հետ ունեցած
զաղտնի խօսակցութիւններ, մտերիմ
խոստովանութիւններ, փառքի ու մահ-
ուան յուշեր:

Ասոր համար է որ այն ամէն ինչ՝ որ
կը պատկանի մեր կորսուած աշխարհին,
իրեն համար ընտանեկան է, իր սրտին ու
քնարին մօտիկ:

Ասոր համար է որ իր բոլոր երկերը
նախաբաններ են հայրենասիրութեան,
պղատոնական խոր համոզումներով յօ-
րինուած: Հիմնադար մը, ամուր խաբիսի
մը, որուն վրայ բարձրացաւ հայ նոր
գրականութեան աշտարակը:

Մենք այսօր կը նայինք Ալիշանին որ-
պէս երեւոյթ մը՝ որ կէս դարէ աւելի
եղաւ գերագոյն թարգմանը հին ու նոր
սերունդներուն միջեւ, իմաստուն հնա-
խոյրը՝ որ գէպի լոյս բերաւ դարերու
խաւարին մէջ թաղուած անվերջ դան-
ձեր, մեր պարթեւական անցեալի դիշե-
րային ժամերէն՝ ուր Պապուլն՝ Հայաս-
տանի կը սիրէր հետազօտել ու երգել
համբերութեամբ ու սիրով:

* * *

Կան բանաստեղծներ որ ինքզինքնին
կ'արտայայտեն իրենց քնարին մէկ թե-
լով: Ամէն ազգ ունի հովուերգական ու
հայրենասիրական, բնապաշտ ու կրօնա-
կան, վշտի ու երգիծանքի բանաստեղծ-
ներ. Ալիշան այս ամէնը իր մէջ կը միա-
ցնէ: Անիկա ամբողջական բանաստեղծ
մըն է, սրտի ու հոգիի փիլիսոփայական
բոլոր գաղտնի խաւերուն մէջ: Իր գոր-

*) Բանախօսութիւն, կատարուած Միլանի «Հայ
Տուն»-ին մէջ, Ալիշանի մահուան 60ամեակին նը-
ւիրուած հանդէսի միջոց, 15 Հոկտ. 1961ին: